Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի N 4 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ

Թեմա՝ Բուլլինգը դպրոցում. Հոգեբանական և սոցիալական պատճառներն ու հետևանքները

Վերապատրաստող, մենթոր՝ Արմենուհի Մելքոնյան

Ուսուցչի օգնական՝ Լիլիթ Մանուկյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Գլուխ 1-ին 5

Գլուխ 2-րդ..... 9

ԱՄՓՈՓՈՒՄ 23

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բուլլինգը որևէ անձի կողմից հոգեբանական կամ ֆիզիկական ուժի գործադրումն է այլ անձի նկատմամբ:

Բուլլինգն ագրեսիայի, չարաշահման, հարկադրանքի ուժի կիրառման, ահաբեկման միջոցով ուրիշներին տիրելու երևույթն է: Այդպիսի պահվածքը հաճախ կրկնվում է և դառնում սովորական: Այստեղ կարևոր նախապայմաններից մեկը ուրիշների կողմից այս ամենի ընկալումն է, սոցիալական և ֆիզիկական ուժի դիսբալանսը, որը տարբերակում է բուլլինգը կոնֆլիկտից:

Դպրոցական բուլլինգի հարցը բավականին հրատապ է: Այս երևույթը կարող է դրսևորվել ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական բռնությունների կերպով: Այն հատուկ է բոլոր տարիքային և սոցիալական խմբերին: Աշակերտների դեստրուկտիվ վարքը, միմյանց հետ ունեցած բացասական հարաբերությունները կրթական գործընթացում ներկայումս կանխարգելման առումով գտնվում են գիտության և պրակտիկայի ուշադրության կենտրոնում: Այդ բացասական միտումները կարելի է ամեն օր տեսնել դպրոցական միջավայրում: Համադասարանցիներին ահաբեկելու թվի աճը, մարդկային արժանապատվության ոտնահարումը, հոգեբանական «հալածանքները», ֆիզիկական բռնությունը, այս ամենը վկայում են այս խնդրի ուսումասիրության և լուծման հրատապության և կարևորության մասին:

Չնայած բուլլինգի որոշ գործողություններ համարվում են քրեորեն անպատժելի արարքներ, այնուամենայնիվ բուլլինգն ինքնին անօրինական երևույթ է համարվում: Սակայն անուղղակի կերպով հանցանք կատարած անչափահասների պատժի կրման առանձնահատկություններին անդրադառնում է նաև ՀՀ քրեական օրենգիրը 5-րդ բաժնի 14-րդ գլխի 86-96 հոդվածներում:

Հետազոտության առարկան - Հետազոտության առարկան է դպրոցական բուլլինգը որպես իրավախախտում, դրա դրսևորման առանձնահատկություններն ու օրինաչափությունները:

Հետազոտության վարկածը - Ենթադրվում է, որ դպրոցական բուլլինգը հանդես է գալիս որպես իրավախախտ վարքի ձևավորման նախորդող փուլ, և վերջինիս համար բարենպաստ պայմաններ ստեղծող միջավայր:

Հետազոտության նպատակը - Հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել, թե որքանով է դպրոցական բուլլինգը համարվում իրավախախտ վարքի առաջացման նախապայման, և տալ դրանց կանխարգելման համար մեթոդական ցուցումներ:

Հետազոտության խնդիրներն են՝

 Սահմանել դպրոցական բուլլինգը

 Բացահայտել բուլլինգի առաջացման մոտիվները

 Բացահայտել դեռահասության և վաղ պատանեկան տարիքում դպրոցական

բուլլինգին նպաստող գործոնները

 Ներկայացնել դրանց դրսևորման առանձնահատկությունները Ներկայացնել

դպրոցական բուլլինգը որպես իրավախախտ վարքի դրսևորում

 Ներկայացնել կանխարգելմանն ուղղված միջոցները

Հետազոտության մեթոդաբանական և տեսական հիմքերն են կազմում՝ Մեր հետազոտության մեթոդաբանական հիմքերն են կազմում համակարգային և դետերմինիզմի սկզբունքները:

Մեր հետազոտության տեսական դրույթների մշակման համար հիմք են հանդիսացել Ի. Ն. Կոնի, Տ. Ֆալդի, Դ. Օլվեուսի և այլոց գիտական հայացքները դպրոցական բուլլինգի վերաբերյալ:

Գլուխ 1-ին

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲՈՒԼԼԻՆԳԻ ՄԱՍԻՆ

Բուլլինգը բավականին նոր հայեցակարգ է ժամանակակից կյանքում: Այն միջազգային տերմին է, որն իր մեջ ներառում է հոգեբանական, սոցիալական, մանկավարժական, իրավական և մի շարք այլ խնդիրներ: Այն դարեր պատմություն ունի: Ցավոք այս ժամանակներում այն նոր, յուրատիպ հրատապություն է առաջ բերել: Ամեն օր ինչպես մեր՝ այնպես է արտասահմանյան ԶԼՄ-ները տեղեկացնում են այն մասին, որ դպրոցներում տեղի են ունենում արտակարգ միջադեպեր, որոնք բացասաբար են անդրադառնում ինչպես ուսումնական պրոցեսի, այնպես էլ աշակերտների հոգեբանական վիճակի վրա: Մանկական խմբերում բռնության խնդիրը մշտապես գտնվել է ուսուցիչների ուշադրության կենտրոնում:

Բուլլինգ տերմինն առաջացել է անգլերեն bulling բառից, որը թարգմանաբար նշանակում է ահաբեկել, ոտնձգության ենթարկել [49]: Ու թեև այս բառը մի նոր երևույթ է, այնուամենայնիվ մենք գիտենք, որ հարցն իր հետ բերում է մի շարք հրատապ խնդիրներ, որոնք լուրջ ուսումնասիրությունների են արժանի, սակայն պակաս տեղեկացվածությունն այս ոլորտի մասին հանգեցնում է մի շարք դժվարությունների:

Բուլլինգի խնդիրը բավականին երկար ժամանակ բարձրաձայնված չէր, այս մասին չխոսելը կարծես թե սովորույթային հարց էր: Նույնիսկ չկար գիտական մի տերմին, որը կբնորոշեր այս երևույթը: Չնայած խնդրի ծայրահեղ կարևորությանը նույնիսկ ռուս գրականության մեջ այն դեռևս լուսաբանված չէ: Տվյալ պահին չկան հատուկ կազմակերպություններ, որոնք զբաղվում են բուլլինգի խնդրով: Չնայած այն հանգամանքին, որ այս երևույթն արևմուտքում գերխնդիր է հանդիսանում:

Բուլլինգի զոհ դարձածները վախենում են իրենց շրջապատից,ունենում են ամոթի զգացում ամեն ինչից, դյուրագրգիռ են, ունեն ցածր ինքնագնահատական: Այդպիսի վարքագիծն իր մեջ ներառում է ինչպես խոսքային ոտնձգություններ,

այնպես էլ սպառնալիքներ, ֆիզիկական բռնություններ, որոնք ուղղված են որոշակի ընտրյալ թիրախների: Նման վարքը երբեմն հիմնավորվում է սոցիալական խավի, սեռի, կրոնի, ռասսայական պատկանելության և այլ տարբերություններից ելնելով [51]:

Բուլլինգը կարող է սահմանվել տարբեր ձևերով; Միացյալ թագավորությունները, Մեծ Բրիտանիան և Հյուսիսային Իռլանդիան չունեն բուլլինգի իրավական սահմանում [55]: Իսկ ԱՄՆ-ի որոշ նահանագներ օրենքներ ունեն բուլլինգի դեմ [54]:

Դպրոցական բուլլինգը տեղի է ունենում կրթական միջավայրում: Բուլլինգն այս դեպքում կարող է լինել ֆիզիկական, սեռական, հոգեբանական, խոսքային կամ կիբեռ բնույթի:

Երկար ժամանակահատված ընդգրկող դպրոցական բուլլինգի հետևանքները շատ են, որոնք չեն սահմանափակվում միայն դեպրեսիաներով, ահնագստացնող կամ ահաբեկող երևույթներով: Հետազոտական վերջին տվյալները փաստում են այն մասին, որ բուլլինգի այդօրինակ ավարտները հաճախ ծնողական բարձիթողության հետևանք են: Հաճախ բուլլինգը հանգեցնում է նրան, որ շատ դպրոցականների մոտ ի հայտ են գալիս ինքնասպանության մտքեր, որոնք էլ երբեմն ավարտվում են հենց ինքնասպանությամբ [50]: Չնայած բուլլինգի որոշ գործողություններ համարվում են քրեորեն անպատժելի արարքներ, այնուամենայնիվ բուլլինգն ինքնին անօրինական երևույթ է համարվում: Բուլլինգի առկա չորս տեսակներից վերջին ժամանակներում առավել տարածված է դառնում կիբեռ տեսակը, որն ավելի հասանելի է դարձնում դպրոցականների բուլլինգի զոհ լինելն օնլայն տիրույթում: Դա առավել հաճախ բուլլինգի մասին նվազ գիտելիքների արդյունք է:

Գուգլի ինտերնետ պորտալում «Bulling» տերմինը հիշատակվում է ավելի քան 11 միլիոն անգամ: Այս խնդրին նվիրված են մի շարք միջազգային կայքեր www.bulling.org, www.bullingonline.org և այլն:

Այս թեմայով առաջին հրապարակումները հայտնվել են բավականին վաղուց՝ դեռևս 1905թ. որոնց հեղինակն էր Կ. Դյուքսը ,սակայն առաջին համակարգված հետազոտություններն իրականացրել են սկանդինավյան գիտնականները:

Մեզ համար մեծ հետաքրքրություն է առաջացրել «Bulling» խնդրին ուղղված միջազգային փորձը: Շատ օգտակար են Դ. Լեյնի, Ի. Ն. Կոնի, Ի. Բերդիշևի աշխատությունները: «Bulling» հասկացությունը դիտարկվում է նեղ կռվի տեսանկյունից [20] մինչև լայնածավալ բռնություն [8, էջ 3]:

Շատ հեղինակներ են նշել դպրոցական բուլլինգի տարածվածության աճի մասին: Դիտարկենք ինչպես են մեկնաբանում «Bulling» հասկացությունը մի քանի գիտնականներ: Դ. Լեյնը ասոցացնում է «Bulling» ը դպրոցական բռնության հետ: Սա իրենից ներկայացնում է հոգեբանական բռնություն անձի կամ խմբի կողմից մեկ այլ անձի հանդեպ, ով չի կարող ինքնուրույն պաշտպանվել [27]: Ի Բերդիշևը տարբերակում է «Bulling»-ը որպես գիտակցված բռնություն, որը չի կրում ինքնապաշտպանական բնույթ, սա բխում է մեկ կամ մի քանի հոգուց [8, էջ 3]:

Հայտնի սոցիոլոգ Ի. Ն. Կոնի կարծիքով «Bulling»ը նույն ահաբեկումն է, ֆիզիկական և հոգեբանական տեռորը ուղղված մեկ այլ անձի, ինչը կարող է առաջացնել վախի զգացում և հնազանդում [20]:

Bully OnLine [www.bullyonline.org] անունը կրող ինտերնետային ռեսուրսի հեղինակ Տ. Ֆալդը ներկայացնում է «Bulling»-ը որպես կանոնավոր կերպով ուղղված բացասական վարք ուղղված մեկ երեխայից մյուսը: «Bulling»-ը կարող է տեղի ունենալ նաև աշխատավայրում, երբ աշխատակազմի ղեկավարը կամ աշխատակիցներից մեկը չափազանց մեծ ուշադրություն է դարձնում մանրուքներին, որի պատճառով ամբողջ կատարված աշխատանքը ստանում է բացասական գնահատական կամ ընդհանրապես չի գնահատվում նույնիսկ լավ կատարված աշխատանքը:

Մեր կարծիքով այդ սահմանումները ամբողջովին չեն ներկայացնում «Bulling»-ի ամբողջ էությունը: Նշված սահմանումները նկարագրում են «Bulling»-ի միայն մի հատվածը, ընդամենը թեթև լույս են սփռում մի քանի բաղադրիչի վրա:

«Բուլլինգ»ը ներառում է 4 հիմնական բաղադրիչ:

1. Ագրեսիվ և բացասական պահվածք
2. Իրականացվում է կանոնավոր
3. Տեղի է ունենում միջանձնային կամ միջխմբային հարաբերություններում 4. Կանխամտածված կամ միտումնավոր պահվածք է:

Նորվեգացի հոգեբան Դ. Օլվեուսը երկար տարիներ աշխատել է այս թեմայի շուրջ և 1993 թ. հրատարակել աշխատություն՝ «բուլլինգը դեռահասների շրջանում»: Որտեղ նշվում էր, որ բուլլինգը համակարգված սիստեմատիկ կրկնվող ագրեսիվ վարք է, որն ուղեկցվում է իշխանության կամ ուժի կիրառմամբ [52, էջ 37]:

Աչիտաևան «բուլլինգ» հասկացությունը կապում է ուսումնական խմբերի դեստրուկտիվ փոխհարաբերությունների հետ, որոնց խմբի անդամների վարքագիծը չեն համապատասխանում հասարակության պահանջներին և բարոյական սկզբունքներին [5 էջ 296]:

Դպրոցական բուլլինգի վերաբերյալ հետազոտություններ իրականացրած սկանդինավյան գիտնականները հարցում էին իրականացրել 7 և 11 տարեկան երեխաների հետ և եկել այն եզրահանգման, որ նրանց 23 %-ը դասընկերների կողմից ենթարկվում են չարաշահման: Իսպանացի գիտնականները փաստում են այն մասին, որ այս երևույթը 17-21 % տարածվածություն ունի: Իռլանդական փորձագետները նշում են,

որդպրոցականների 10 % պարբերաբար բռնության են ենթարկվում իրենց հասակակիցների կողմից շաբաթը մեկ անգամ կամ ավելին, իսկ 55 % երբեմն [43 էջ 84]:

Գլուխ 2-րդ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲՈՒԼԼԻՆԳԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ և ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Դպրոցում նման ագրեսիայի զոհ կարող է դառնալ ցանկացած երեխա: Հիմնականում զոհ են դառնում ֆիզիկապես թույլ երեխաները, ովքեր ունեն մտային զարգացվածություն և դասարանում բոլորից առանձնանում է իրենց գիտելիքներով կամ ովքեր այս կամ այն կերպ առանձնանում են բոլորից:

Ավելի հաճախ դպրոցական բռնության զոհ են դառնում երեխաներ, ովքեր ունեն՝

✓Ֆիզիկական թերություններ, օրինակ տեսողական կամ լսողական, հենաշարժողական համակարգի խնդիրներ:

✓Վարքագծի յուրահատկություններ, օրինակ եթե չշփվող՝ ինտրովերտ երեխա է կամ հակառակը՝ առանձնանում է իմպուլսիվ վարքագծով: Գերակտիվ երեխաները չափազանց հաստատակամ են, կրկնում են անդադար նույն բանը, սակայն ավելի անմիջական և միամիտ են, քան իրենց հասակակիցները: Նման երեխաները սիրում են մտնել ուրիշի անձնական տարածք, լսել և մասնակցել խոսակցություններին, ապրումակցում են նրանց հույզերը: Խաղերի ժամանակ ավելի անհամբեր են և պարտադրում են իրենց կարծիքը: Այս ամենի պատճառով նյարդայնացնում են մյուսներին, ինչի համար էլ ստանում են հակահարված, հաճախ կոպիտ պատասխան: Գերակտիվ երեխաները կարող են լինել և՛ զոհի կարգավիճակում, և՛ ագրեսիվ երեխայի դերում, իսկ երբեմն էլ՝ երկուսը միասին:

✓Արտաքին տեսքի յուրահատկություններ: Եթե երեխաներն ունեն մնացածից տարբերվող արտաքին, օրինակ կրակագույն մազեր, պեպեններ, մեծ ականջներ, մարմնի տարօրինակ զանգված՝ չափից դուրս նիհար կամ գեր լինելը: Այս ամենը

հանդիսանում է ծիծաղի պատճառ իր հասակակիցների համար:

✓Սոցիալական վատ հմտություններ: Կան երեխաներ ում մոտ լավ զարգացած

չէ հոգեբանական պաշտպանվածությունը խոսքային և ֆիզիկական կամ ուժային բռնությունից: Սրա պատճառ կարող են հանդիսանալ, ինքնաարտահայտման և հաղորդակցման անփորձությունը:

✓Հիվանդություններ: Երեխաները անկախ իրենց տարիքից, ցավոք, ունենում են

հիվանդություններ, որոնք դառնում են հասակակիցների ծաղրի առարկա: Այդ տարիքում երեխաները չեն հասկանում կամ պատկերացում չեն կազմում հիվանդությունների, նրանց բարդությունների մասին այդ իսկ պատճառով այդ անհասկանալի իրավիճակը դառնում է նրանց համար ծաղրելի: Այդ հիվանդությունների շարքին են պատկանում էպիլեպսիան, կակազը, միզուղիներիանզսպությունը, խոսքի խանգարումը, լեզվի փայտացումը, կարդալու կամ հաշվելու անկարողունակությունը, անգրագետ գրելը:

✓ Ցածր ինտելեկտ և ուսանելու դժվարություններ: Մտավոր ցածր

ունակությունները թելադրում են ցածր առաջադիմություն երեխայի մոտ: Ցածր առաջադիմությունը ձևավորում է ցածր ինքնագնահատական՝ «ես չեմ կարող», «ես թերանում եմ», «ես ուրիշներից վատն եմ»: Ցածր առաջադիմություն ունեցող երեխաները նույնպես հաճախ են հանդիսանում զոհի դերում, սակայն կարող է լինել նաև հակառակը՝ ինքը լինի բռնություն կիրառողը մյուսների հանդեպ, ցույց տալու համար, որ նա թույլ չէ: Սա ավելի շատ ինքնապաշտպանական բնույթ է կրում:

Դպրոցական ահաբեկումն իր մեջ ներառում է տուժողի հանդեպ կռվարարի կողմից տարբեր գործողություններ, որոնք ուղղված են զգացմունքային, ֆիզիկական, տնտեսական և սեռական բռնության և ագրեսիայի միջոցով զոհի նվաստացմանը: Զգացմունքային բռնության ժամանակ զգացմունքային լարվածություն է առաջացնում, նվաստացնում է նրան և իջեցնում նրա ինքնագնահատականը: Այդ

դեպքում ձայնը ծառայում է որպես զենք: Առանձնացնում են զգացմունքային բռնության հետևյալ ձևերը.

1. Ծաղրուծանակ, մականուններ, որով մշտապես դիմում են մի մարդու, ինչով վիրավորում և անպատվում են նրան, անվերջ նկատողություններ, կողմնակալ գնահատականներ, ծաղրանք, այլ երեխաների ներկայությամբ նվաստացումև այլն: 2. Բռնի անջատում, մեկուսացում, զոհի հետ շփվելու մերժում: Որպես օրենք, այս մեթոդի նախաձեռնողը խուլիգանն է: Զոհը կանխամտածված կերպով մեկուսացվում է, վտարվում կամ արհամարհվում դասարանի մի մասի կամ ամբողջ դասարանի կողմից (երեխայի հետ հրաժարվում են խաղալ, զբաղվել, նրա հետ միևնույն նստարանին չեն ուզում նստել, չեն հրավիրում ծննդյան տոների և այլն):

3. Ֆիզիկական բռնության տակ ի նկատի ունեն աշակերտի նկատմամբ ֆիզիկական ուժի կիրառում, որի հետևանքում հնարավոր է ֆիզիկական վնասվածքի պատճառում: Ֆիզիկական բռնություն է համարվում ծեծը, հարված հասցնելը, ապտակները, ունեցվածքի վնասումը: Նմանատիպ վարվելագիծն ավելի հաճախ հանդիպում է տղաների մոտ, քան թե աղջիկների :

4. Տնտեսական բռնությունն ենթադրում է այլ անձին վերահսկելու նպատակով գումարի գործածումը: Նաև այս դեպքում զոհից գումար են պահանջում և սպառնում, եթե նա անմիջապես չի տալիս: Զոհին կարող են ստիպել գույք գողանալ:

Ուսումնասիրող Մալցևան նշում է, որ հայտնվել է դպրոցական բուլլինգի մի նոր տարատեսակ՝ կիբեռահաբեկում, այսինքն՝ զոհն իր էլեկտրոնային փոստին կամ այլ էլեկտրոնային սարքերի միջոցով վիրավորանքներ է ստանում [31]:

«Բուլինգ»-ի պատճառները բարդ են ու բազմազան: Գիտության մեջ մի քանի տարբերակով են բացատրում ագրեսիայի բնույթն ու դրդապատճառները: Դիտարկենք դրանցից մի քանիսը:

Զ. Ֆրեյդի հոգեվերլուծական մոտեցման մեջ ագրեսիան դիտարկվում է որպես պայքարի, կյանքի, մահվան բնազդ: Ֆրեյդը ուսումնասիրելով ագրեսիայի բնույթը ենթադրել էր, որ մարդու մեջ անդադար գեներացվում է ագրեսիվ էներգիա, որը նա

պարբերաբար դուրս է հանում օրգանիզմից, երբեմն նույնիսկ առանց ակնհայտ պատճառների [45, էջ 448]:

Ագրեսիան դրված է մարդու մեջ ի ծնե, այսինքն մարդ ագրեսիա կրում է իր ծնված օրից, իսկ ագրեսիվությունը, որպես սոցիալական որակ ձեռք է բերվում երեխայի կողմից շատ շուտ, եթե նա հնարավորություն ունի դիտարկել ագրեսիա երևույթը իրեն շրջապատող կյանքում, այսինքն ականատես է լինում տան անդամների ցուցաբերած ագ

րեսիաներին:

Ինչպես նշում է Ի.Գ. Մալկինան մեծ հասակում բռնություն ունեն այն երեխաները, ում ընտանիքներում տեղի են ունենում հետևյալը՝

1. Ոչ լիարժեք ընտանիք: Միակողմանի ծնողազուրկ երեխան ավելի հակված է բռնության իր հասակակիցների հանդեպ: Ընդ որում այդպիսի ընտանիքներում ապրող աղջիկները ավելի հաճախ են ցուցաբերում էմոցիոնալ բռնություն, քան տղաները: 2. Ընտանիքներ, որտեղ մայրը վատ է տրամադրված կյանքի նկատմամբ: Այսպիսի վարքագծով մայրերը վստահություն չունեն աշխարհի և շրջապատի նկատմամբ, չեն ցանկանում համագործակցել դպրոցի և այլ սոցիալական օղակների հետ: Այս ամենին զուգահեռ մայրը չի փորձում համապատասխան զրույցներ տանել երեխային հետ, որպեսզի նա նույնպես չկրկնի մոր սխալները: Այս մարդիկ հակված են արդարացնել բռնությունը, որն ուղղված է աշխարհի և ընդհանրապես կյանքի դեմ: 3. Իշխանություն ունեցող ընտանիքներ: Երեխայի դաստիարակությունը գերհոգատարության պայմաններում բնութագրվում է ծնողի խիստ բնավորությամբ, ովքեր ստիպում են, որ երեխան հնազանդվի, կատարի ծնողի բոլոր ցանկությունները՝ հաշվի չառնելով երեխայի հետաքրքրությունները: Սա բերում է երեխայի ճնշված հոգեվիճակին: Սակայն այս դեպքում երեխան իր ներքին ապրումները ցուցաբերում է դպրոցում ագրեսիայի տեսքով:
4. Ընտանիքներ, որոնք առանձնանում են կոնֆլիկտային հարաբերություններով:

Այս ընտանիքներում մեծերը հաճախակի են բռնկվում վեճի առանց հաշվի առնելով, որ երեխան/ները ներկա են այդ բացասական իրավիճակին:

5. Ընտանիքներ, որոնք գենետիկորեն ունեն բռնության հակում: Երեխաների մոտ գենետիկորեն տարբերվում է ստրեսակայունությունը:

Երեխայի համար չկա ավելի դաժան պատիժ, քան սիրո և վստահության բացակայությունը: Շատ հոգեբաններ պնդում են, որ սիրո առաջին աստիճանը կամ հիմքը հենց քո անձի հանդեպ սերն է: Եթե երեխան չի սիրում իրեն, նա չի կարող սիրել նաև ուրիշներին: Նշվածից կարող է բխել նաև շրջապատի և ողջ աշխարհի հանդեպ ագրեսիան:

.Երեխայի ագրեսիան կարող է պայմանավորված լինել նաև սննդամթերքով: Ապացուցված փաստ է շոկոլադի և ագրեսիայի, անհանգստությունների կապը: Արտերկրում մի շարք հետազոտություններ են անցկացվել և պարզվել է համբուրգերների, գազավորված ըմպելիքների, արագ սնունդի կապը ագրեսիայի, անկառավարելի իրավիճակի հետ:

. Աղմուկի, նեղ տարածության, ցածր ջերմաստիճանի ազդեցությունը: Գիտնականներն ապացուցել են, որ բուռն կոնֆլիկտներն առաջանում են ավելի հաճախ շոգ եղանակի ժամանակ: Սա զարմանալի չէ և ունի իր բացատրությունը: Շոգ եղանակը մեր օրգանիզմի վրա ունի սթրեսային ազդեցություն: Շոգին, երբ օդը քիչ է, դժվար է շնչել,

մարդը դառնում է դյուրագրգիռ, ինչն էլ բերում է լարվածության և ագրեսիայի:

. Համակարգչային խաղերի մեծամասնությունը ունեն ագրեսիվ բնույթ: Խաղերում առկա են արյան տեսարաններ, սպանելու կամ հարվածելու, իրը վերցնելու հանձնարարություններ: Երեխաները տարվելով խաղով, չեն կարողանում տարորոշել խաղը իրականությունից և իրականությունում նույնպես դառնում են դաժան, պատկերացնելով իրենց խաղային հերոս:

Խոսելով դպրոցական բուլլիգի մասին՝ հարկ է առանձնացնել բուլլինգի

նպատակը, որը կարևորագույն կողմ է համարվում կանխարգելման առումով. որն է՝ ագրեսիվ վարքի հետևում թաքցնել սեփական անկատարությունը: Բուլլինգը ոչ մի ընդհանրություն չունի կոլեկտիվի ղեկավարման հետ, եթե այն կիրառվում է մեծահասակի կողմից, քանի որ լավ ուսուցիչը ղեկավարում է կոլեկտիվը, իսկ վատը՝ թունավորում: Այդ պատճառով ցանկացածը, որ ընտրում է թունավորումը որպես մեթոդ, լինի դա մեծահասակ կամ երեխա, ցույց է տալիս իր անկատարությունը, և այն ուժը, որով մարդը թունավորում է մյուսին, որոշում է բռնակալի անկատարության աստիճանը:

Արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքը (նվաստացումները) անցանկալի, ագրեսիվ վարք է դպրոցականների շրջանում, որը ներառում է իրական կամ ենթադրյալ ուժերի անհավասարակշռություն կրկնվելու հատկություն ունի:

Մասնագետները տարբերում են բուլլինգի հետևյալ տեսակները՝

· ֆիզիկական – հարվածել, թքել, հրմշտել, ուրիշի իրերին տիրանալ կամ ջարդել, մտադիր, կամ կոպիտ շարժումներ կատարել, որոնք կարող են վնասել մարդու մարմինը կամ գույքը,

· բանավոր – ծաղրել, սպառնալ, պիտակավորել, անհարկի սեռական բնույթի մեկնաբանություններ անել,

· հոգեբանական/սոցիալական – դիտավորյալ խմբից վտարել / չընդունել, բամբասանքներ տարածել, վախեցնել, հասարակայնորեն վարկաբեկել, · սեռական – հպուներ, հարձակումներ, բռնի գործողություններ և այլն, · կիբեր-բուլլինգ կամ կիբեր սադրանք – տեքստային հաղորդագրություններ, սպառնալիքներ, անպարկեշտ նկարներ վիրավորական նյութեր ուղարկելը կամ տարածելը ինտերնետի կամ այլ տեխնոլոգիաների միջոցով:

Արժանապատվության նսեմացումը տարածված է, բայց այն չպետք է դիտվի

որպես նորմալ երևույթ: Այն կարող է ազդել յուրաքանչյուրի վրա, ու լուրջ, երկարատև հետևանքներ թողնել (հոգեկան առողջության խնդիրներ, թմրադեղերի օգտագործում և ինքնասպանություն) մինչև իսկ երիտասարդ ու հասուն տարիքում:

Այդ իսկ պատճառով նմանատիպ վարքը հասցեագրելիս շատ կարևոր են ընտանիքի, դպրոցի, հասարակության համալիր ջանքերը, և խնդրի համակողմանի ուսումնասիրումը՝ նսեմացման ենթարկողի, ենթարկվողի և ականատեսի տեսանկյունից:

Բուլլինգին մասնակցում են ոչ միայն երեխաները, այլև մանկավարժները: Այսինքն՝ բուլլինգի զոհեր կարող են դառնալ և՛ երեխաները, և՛ մանկավարժները, հետևաբար որպես բուլլերներ կարող են հանդես գալ և՛ մեծահասակները, և՛ երեխաները: Գոյություն ունեն մի շարք գործոններ, որոնք նպաստում են բուլլինգի ծաղկմանը մանկական կոլեկտիվներում: Այդ երևույթի զարգացմանը մեծ մասամբ նպաստում է ընտանիքի դաստիարակությունը և այն ուսումնական հաստատության միկրոկլիման, ուր ընկնում են երեխաները կրթություն ստանալու համար:

Մեծահասակները դպրոցում կարող են անկանխամտածված կամ այլ կերպով մասնակցել բուլլինգին, դրդել կամ նպաստել դրան հետևյալ ճանապարհով.

✓աշակերտի ցածրացում, որը չի հասցնում/հաջողության չի հասնում ուսման մեջ կամ խոցելի է այլ հարաբերություններում:

✓բացասական կամ ծաղրական արտահայտություններ աշակերտի արտաքին տեսքի կամ ծագման առումով:

✓վախեցնող կամ սպառնացող ժեստեր կամ արտահայտություններ: ✓

արտոնյալ վերաբերմունք հաճոյացող սովորողների նկատմամբ:

✓աշակերտների վիրավորում ստորացնող, իսկ երբեմն նույնիսկ անպարկեշտ բառերով:

Բուլլինգին կարող են նպաստել նաև՝

❖դասարանում ճանաչված «առաջնորդի» առկայությունը

❖երկու աշակերտների միջև սուր կոնֆլիկտի առաջացում արտաքին առիթների ազդեցության տակ, որոնք սադրիչ գործոններ են համարվում ագրեսորի (բուլլերի) համար

❖ ուսուցիչների՝ իրենց անտեղյակության չափով իրենց վրա պատասխանատվություն վերցնելու դժկամությունը ի հակադրում աշակերտների իշխանասեր վարքին:

❖ուսուցիչների կողմից դասամիջոցների ժամանակ աշակերտների վարքի վերահսկման բացակայություն:

Բացի մեծահասակների վարքից, որը նպաստում է դպրոցական միջավայրում բուլլինգի ծաղկմանը, առանձնացնում են նաև մի շարք գործոններ, որոնք կարող են դրդել երեխաների շրջանում բուլլինգի զարգացմանը՝

 երեխայի դաստիարակության ցածր մակարդակը

 ոչ ադեկվատ ցածր ինքնագնահատականը

 բարձր իմպուլսիվությունը

 ալկոհոլի, թմրանյութերի, համակարգչային խաղերի

չարաշահումը ինքնապահպանման ցածր զգացողությունը

երեխայի մոտ

- Սովորողի ներքին անձնական ագրեսիվությունը՝ կախված անհատական առանձնահատկություններից
- խմբում կարգավիճակը պահպանելու և խմբին համապատասխանելու ցանկությունը
- խմբերի նկատմամբ գերիշխանություն ունենալու ցանկությունը
- աշակերտների կենսագործունեության նախորդ փորձը, որն իր մեջ ներառում է սեփական ագրեսիվության դրսևորում և նման դրսևորումների նկատում շրջակա միջավայրում
- բացականեր և թույլ առաջադիմություն դպրոցում
- խնամակալների փոփոխություն (հայրացու, մայրացու), ընտանիքում երկրորդ երեխայի հայտնվում
- ընտանեկան և սեռական բռնություն
- ներքին ընտանեկան կոնֆլիկտներ
- ընտանիքի ցածր սոցիալ-տնտեսական կարգավիճակ
- առաջադիմության մեծ պահանջներ, որոնք ոչ միշտ են համապատասխանում երեխայի ընդունակություններին և հնարավորություններին
- Ծնողների կողմից գերխնամք կամ անտարբերություն

Բուլլինգի դրդող մոտիվներ են համարվում՝

- Նախանձը

· Վրեժը (երբ զոհերը անցնում են բուլլերների շարքը ցավի և պատճառած տառապանքների համար)

· Զզվանքի զգացողությունը

· Պայքարը իշխանության համար

· Մրցակցի չեզոքացում՝ ցույց տալով նրա նկատմամբ ունեցած առավելությունը · Ինքնավստահությունը՝ մինչև առանձին անհատների սադիստական պահանջների բավարարումը

· Ուշադրության կենտրոնում լինելու, լավ երևալու ձգտումը

· Զարմացնելու, ապշեցնելու ձգտումը

· «Ծաղրելու», լիցքավորվելու ձգտումը

· Դուր չեկած մարդուն ցածրացնելու, վախեցնելու ցանկությունը:

Բուլլինգի մասնակիցների հոգեբանական

առանձնահատկությունները

Որպես կանոն, բուլլինգին մասնակցում են մի քանի գործող անձինք. Բուլլի (բուլլերներ, վիրավորողներ, ագրեսորներ, թունավորում կազմակերպողներ): Դրանց թվին կարելի է դասել նաև հետապնդողներին, որոնք գործում են դասարանում ավելի ուժեղ ագրեսորների ցուցումներով:

Հաճախ բուլլերներ դառնում են.

· միայնակ ծնողի կողմից դաստիարակվող երեխաները

· այն ընտանիքների երեխաները, որոնցում մոր մոտ նկատվում է կյանքի նկատմամբ

բացասական վերաբերմունքիշխանություն և հեղինակություն ունեցող ընտանիքների երեխաները

· կոնֆլիկտային ընտանիքների երեխաները

· սթրեսի նկատմամբ ցածր կայունություն ունեող երեխաները

· ցածր առաջադիմությամբ երեխաները:

Բուլլերները դրանք՝

· Ակտիվ, շփվող երեխաներ են, ովքեր հավակնում են դասարանում զբաղեցնել

առաջնորդի դերը

· Ագրեսիվ երեխաներ են, ովքեր իրենց ինքնահաստատման համար օգտագործում

են անպատասխան զոհին

· Երեխաներ, որոնք ձգտում են լինել ուշադրության կենտրոնում ·

Մաքսիմալիստներ, ովքեր չեն ցանկանում փոխզիջումների գնալ · Ցածր

ինքնավերահսկմամբ երեխաները, ովքեր չեն սովորել իրենց վրա պատասխանատվություն վերցնել իրենց վարքի համար

· Երեխաներ, որոնց չեն սովորեցրել ավելի լավ վարքի միջոցներ, այսինքն՝

անդաստիարակ երեխաները:

Բուլլերների համար բնութագրական են՝

 իմպուլսիվությունը

 Գրգռվածությունը

 էմոցիոնալ անկայունությունը

 բարձր ինքնագնահատականը

 թշնամությունը (ագրեսիվությունը)

 հաղորդակցության հմտությունների բացակայությունը համընդհանուր նորմերի և կանոնների արտաքին պահպանման դեպքում

 Ստի կամ խաբեություն միտումը:

Բավականին հաճախ բուլլինգին միանում են հետապնդողների մի խումբ, որոնց հետ բուլլերն իրականացնում է իր ագրեսիան: Ո՞վ է առավել հաճախ դառնում հետապնդող, բուլլերների օգնական.

- ❖Ոչ ինքնուրույն, շրջապատողների ազդեցությանը հեշտությամբ ենթարկվող, աննախաձեռնող երեխաները
- ❖Երեխաները, ովքեր միշտ ձգտում են հետևել կանոններին, որոշակի ստանդարտներին (շատ ջանասեր և օրինապահ)
- ❖ Երեխաները, ովքեր հակված չեն ճանաչել իրենց պատասխանատվությունը տեղի ունեցողի նկատմամբ (առավել հաճախ մեղավոր են համարում ուրիշներին)
- ❖ Երեխաները, ովքեր հաճախ խիստ վերահսկողության են ենթարկվել մեծերի կողմից (նրանց ծնողները շատ պահանջկոտ են և հակված են կիրառել ֆիզիկական պատիժներ)
- ❖Եսակենտրոն երեխաները, որոնք չեն կարող իրենց մյուսների տեղը դնել

Դպրոցական ահաբեկման հաղթահարմանն ուղղված սոցիալ-հոգեբանական աշխատանքի գլխավոր խնդիրներից մեկն աշակերտների մոտ ագրեսիայի կառուցողական ղեկավարման հմտությունների զարգացման համապարփակ ծրագրի

իրագործումն է: Տվյալ ծրագիրը պետք է հիմնված լինի հետևյալ հոգեբանա-մանկավարժական սկզբունքների վրա:

· ուղղիչ, կանխարգելիչ և զարգացնող խնդիրների համակարգայնությունը

· ուղղման և ախտորոշման միասնականությունը

· պատճառական տիպի ուղղման առաջնահերթությունը

· աշակերտի տարիքա-հոգեբանական և անհատական առանձնահատկությունները

հաշվի առնելը

· հոգեբանական ազդեցության մեթոդների համապարփակությունը · ուղղիչ ծրագրի

մեջ ամենամոտ սոցիալական շրջապատի ակտիվ ներգրավումը [11. Էջ 159]

· Հոգեբանա-մանկավարժական ուղղիչ աշխատանքն ի վերջո պետք ուղղված լինի ոչ

թե ագրեսիայից ազատմանը, այլ դրան հանգեցնող պաատճառների վերացմանը, երեխայի վարքի մեջ ակտիվ կիրառվող գործիքների ընդլայնմանը: Հոգեբանա-մանկավարժական գրականության և պրակտիկայի մեջ [10, 29, 30] առանձնացվում են հետևյալ

ուղղությունները, որոնցով պետք է կատարվի ագրեսիայի ուղղման աշխատանքը: Դրանցից են.

· Ագրեսիվ երեխաներին ցասումը սոցիալապես ընդունելի կերպով արտահայտելու

եղանակներ սովորեցնելը

· երեխաներին ինքնակարգավորման և ինքնատիրապետման միջոցներ սվորեցնելը,

հնարավոր հակամարտության պայմաններում շփվելու հմտությունների մշակում: ·

դեռահասների մոտ այնպիսի անձնային հատկանիշների ձևավորում, ինչպիսին է էմպատիան և մարդկանց հանդեպ վստահությունը :

· Երեխաների ուշադրության և ակտիվության ուղղորդումը դեպի կառուցողական ուղիներ: Ծատ հոգեբանների կարծիքով եթե երեխան իր ողջ ուշադրությունը սևեռում է մի գործի վրա նրա մեջ չի կուտակվում ավելորդ ագրեսիա, որը թույլ է տալիս ավելի խաղաղ պայմաններում ապրել:

· Դերային խաղերը,որոնք հնարավորություն են տալիս երեխային տեսնել իրեն տարբեր իրավիճակներում, զգալ և կողմնորոշվել, թե ինչ դեր են ցանկանում ունենալ հասարակությունում;

· Երեխաներին միմյանց հանդեպ նրբազգաց և ուշադիր վերաբերմունք սովորեցնող առաջադրանքներ : Ծնողները իրենք պետք է լինեն ավելի ուշադիր, նրբանկատ: Եթե երեխան մի բան է արել `պետք չէ զերծ մնալ գովեստից:

· Հոգեբանական բնույթի թրեյնինգ (խորը շունչ քաշել, հաշվել մինչև 10-ը, մտքում պատկերացնել իր արարքի հետևանքները և այլն)

· Օրգանիզմի կոփում (սառը ջրով լվացվել): Օրգանիզմի, մարմնի հանգիստ վիճակը նպաստում է մարդու ընդհանուր հանգիստ վիճակին: Նա դառնում է ավելի համբերատար և ուշադիր:

· Կամքի ուժի դաստիարակություն (հակամարտությունների մեջ չմտնելու և ուրիշներին չնեղացնելու խոստում տալ, ամեն օր հետևել տրված խոստման կատարմանը և այլն)

· Զեկույցներ (անցած օրվա արդյունքների ամփոփում, վարքի վերլուծություն և

այլն) [40, էջ 49]:

Դպրոցում կոնֆլիկտային իրավիճակներում ագրեսիայի դրսևորման կանխարգելման համար տվյալ խնդրի մասնագետները խորհուրդ են տալիս հետևյալ վարժությունները[43, 31]՝

«Առաջարկությունների տուփիկ»: Անհրաժեշտ է աշակերտներին հնարավորություն տալ արտահայտել իրենց արաջարկություններն այն մասին, թե ինչպես պետք է վարվել: Որոշ գաղափարներ պետք է գրատախտակի վրա գրել: Կանոնների ցուցակը պետք է արտագրել թղթի վրա և կպցնել օրագրի մեջ: «Առաջարկությունների տուփիկը» դասարանում դրեք երևացող վայրում և հայտարարեք, որ ցանկացած առաջարկ հաշվի կառնվի: Կողքը դրեք թղթի պաշար, որպեսզի բոլորը կարողանան իրենց առաջարկները գրել և տուփի մեջ գցել [43, էջ 84]

«Հաջողությունների տետրակ»: Նպատակն է՝ դրական հաջողությունների վրա ուշադրությունը սևեռել: Թող յուրաքանչյուր աշակերտ մի տետր վարի, որտեղ կանոնավոր կերպով գրանցի իր հաջողությունները տարվա ընթացքում: Ընդ որում, երեխաներին պետք է բացատրել, որ անպայման չէ նշել միայն ամենամեծ «սխրանքները», այլ կարևոր է նշել նաև ցանկացած ոլորտում փոքրիկ հաջողությունները: Արժե սկսել տետրը լրացնել նախկին հաջողությունները գրանցելով, իսկ այնուհետև մոտավորապես շաբաթական մեկ անգամ նորերն ավելացնել: Ժամանակ առ ժամանակ ուսուցիչը խնդրում է երեխաներին տետրակի մեջ նայել, որպեսզի հետևյալ հարցերի շուրջ մտորել. ինչն ինձ օգնեց այս հաջողությանը հասնելուն, ով ինձ օգնեց: [43, էջ 85]:

«Կախարդական բարձիկ»: Նպատակն է երեխաների մոտ երազելու և նպատակներ դնելու կարողությունները զարգացնել: Պետք է երեխաներին զգացնել տալ, որ իրենց ցանկությունները շրջապատի կողմից ուշադրության են արժանանում: Արդյոք ունես որևէ մի ցանկություն, որը ուսուցիչը կամ աշակերտները կարող են կատարել [31, էջ 52]:

«Իրավիճակ բեմադրել»: Նպատակն է խմբի համախմբվածությունը զարգացնել, կոնֆլիկտային իրավիճակներ հաղթահարել: Երեխաների հետ քննարկեք իրականում

ծագած որևէ խնդիր կամ ինչ-որ վեճի մասին պատմեք և առաջարկեք նրանց այդ «կոնֆլիկտը» մարելու համար խորհուրդներ տալ: [31, էջ 53]:

Բոլոր այս վարժություններն իրագործելը բարդ չէ, դրանց կիրառումը կնպաստի դպրոցում ագրեսիվ դրսևորման նվազմանը :

Ամփոփում

Դպրոցական բուլլինգը ժամանակակից աշխարհի արդի հիմնախնդիրներից է:

Այս աշխատության մեջ մենք փորձեցինք ներկայացնել տարբեր դրդապատճառներ ունեցող բուլլինգի մի քանի տեսակներ: Նշված բոլոր տեսակներն ունեն մտացածին բնույթ և թույլատրված չեն իրավապաշտպան մարմինների կողմից, իրականացվում են երկարատև ֆիզիկական և հոգեբանական բռնություններ անհատի կամ խմբի կողմից,
ովքեր ունեն ֆիզիկական կամ սոցիալական առավելություն զոհի հանդեպ:

Մեզ թվում է, որ դաժանության մակարդակը դպրոցներում երբեմն չափազանց է խոշտանգումներ, ծեծ, ձեռառնոցի: Երեխաները տարեց տարի ավելի դաժան են դառնում: Մեր բերած օրինակներից երևում է, որ իրավիճակն ավելի է բարդանում: Սակայն ոչ ոք չի շտապում որևէ բան անել: Դպրոցական բուլլինգն ուղղակի և անուղղակի ազդեցություն է թողնում երեխաների հոգեկան ներաշխարհի վրա:

Վերոնշյալից կարող ենք եզրակացնել, որ «Բուլինգ»ը ինքնորոշման, ինքնապաշտպանության և ինքնաարտահայտման միջոց է հանդիսանում: Ծատերը պաշտպանվում են իսկ մյուս մասը փորձում է ավելի հայտնի լինել և իր ձեռքը վերցնել դասարանական կոլեկտիվի «իշխանությունը»: Երեխաների մի մասը ագրեսիա է կիրառում ուրիշի հանդեպ, որպեսզի ինքը զերծ մնա զոհ դառնալուց: Եթե մեծահասակը կարող է պատկերացում կազմել ինչի կբերի իր ազդեցությունը, ինչ կարող է տեղի ունենալ ընտրված զոհի հետ, ապա երեխաները այդ ամենը խորապես չեն պատկերացնում: Նախ դպրոցական երկարատև խոշտանգումները և մյուս երեխաների կողմից դաժանությունները ազդում են երեխայի սեփական «ես»-ի, դրա զարգացման վրա: Տեղի է ունենում ինքնագնահատականի անկում: Երեխան հետագայում փորձում է հեռու մնալ մարդկային հարաբերություններից, քչացնում է շփումը այլ մարդկանց՝ դասընկերների, կոլեգաների հետ: Սակայն կարելի է ասել, որ կան դեպքեր, երբ տեղի է

ունենում նաև հակառակը՝ մյուս երեխաները հեռու են մնում «զոհից», վախենալով, որ նրանք նույնպես կդառնան «զոհ», համապատասխան հայտնի արտահայտությանը՝ «Ասա ով է ընկերդ, ասեմ ով ես դու»: Նման երեխաները վախենում են, որ մյուսները կնկատեն իր շփումը դասընկերների կողմից չընդունվող մեկի հետ: «Զոհ»ի համար ստեղծված իրավիճակը մեծ խնդիր է դառնում դպրոցում ընկերական շրջապատի ստեղծման փուլում: Պետք է նշել, որ դպրոցում մերժված կամ չընդունված լինելը իր բացասական դերն է ունենում սոցիալական այլ ոլորտներում:

«Բուլինգ»-ը դադարեցնելու համար պետք է բարձրացնել մշակութային մակարդակը: Ներկայումս քիչ ուշադրություն է դարձվում բարոյական դաստիարակությանը: Դպրոցում աշխատող բոլոր ուսուցիչները պետք է ավելի շատ ժամանակ տրամադրեն աշակերտների բարոյական կրթությանը, վարքին և կազմակերպեն համապատասխան զրույցներ:

Բոլոր երեխաները ունեն ուշադրության կարիք: Բավական է, միայն որ նրանք խոսեն և արտահայտեն իրենց մտացածը: Ուսուցիչը պարտավոր է իմանալ՝ ինչ է կատարվում երեխայի ընտանիքում, նրա հոգեկան աշխարհում: Կարծում ենք, այս դեպքում կքչանա նաև դեռահասների կողմից կատարվող իրավախախտումներն ու ինքնասպանությունները: Նմանատիպ զրույցները դրական կազդեն ուսուցման վրա, քանի որ ընտանեկան իրավիճակը ազդում է նաև ուսուցման վրա: Եթե երեխայի վրա տանը փոխազդում են բացասական էներգիայով, ապա նա այդ էներգիան «արտահայտում է» դպրոցում արդեն քննարկված միջոցով: Շատ կարևոր է բարձրացնել ուսուցիչների կրթական մակարդակը որպեսզի նա կարողանա ուսումնական ծրագիրը դարձնել երեխաների համար հետաքրքիր, որը կնպաստի, որ ուսուցիչը հեղինակություն ձեռք բերի երեխաների համար:

Զոհի կարգավիճակի ձեռք բերումը կախված է խմբում ցածր դեր ունեցող ուսման և վարք հետ կապված խնդիրներից: Այդպիսի երեխաների մոտ մեծ է ռիսկը նյարդահոգեբանական և վարքային խանգարումների ձեռք բերումը: Դպրոցական բռնության զոհերի համար հատուկ են նյարդային խանգարումները, դեպրեսիան,

քնի և ախորժակի խանգարման դեպքերը: Լինում են նաև ավելի վատ և անդառնալի դեպքեր:

Դեռահասների մոտ դպրոցական բռնությունը առաջացնում է ինքնության զարգացման խանգարում: Երկարատև սթրեսը առաջ է քաշում հուսահատության և անկարողունակության զգացումներ, որոնք էլ իրենց հերթին հանգեցնում են ինքնասպանության հետ կապված մտքերի զարգացմանը: Կարծում ենք, կարիք կա կազմակերպել համակարգված աշխատանք երեխաների հետ դպրոցից դուրս: Ի վերջո, եթե երեխան ունի հետաքրքիր զբաղմունք, օրինակ զբաղվում է սպորտով նա դուրս է թափում իր մեջ կուտակված բացասական էներգիան: Կարևոր է, որ նմանօրինակ պարապմունքները համատեղեն բարոյական կրթության զարգացման հետ: Մեր կարծիքով ներկայի կրթական համակարգում կան շատ թերություններ, սակայն սխալ կլինի ասել, որ այդ թերությունների պատճառ հանդիսանում են բռնությունները: Մեզանից շատերը կարող են հիշել դասարանական բազում օրինակներ, երբ դասընկերները լավ հարաբերություններ են ունեցել դպրոցում և նույնիսկ դպրոցն ավարտելուց հետո:

Շատ կարևոր է, որ դպրոցական բռնությունը չդառնա բնական երևույթ, իսկ ագրեսիան չդիտվի որպես վարքային նորմա: Կարծում ենք դեռ հույս կա, որ երեխաների ճկուն հոգեկան աշխարհը, դեռահասի զարգացող ինքնագիտակցությունը և մեծերի իմաստությունը կօգնեն հաղթահարել հույզերի կամ սպասումների անբավարարության

հետևանքները, որոնք գիտակցաբար կամ ակամա խաղարկվում են մարդկանց կողմից իրենց մանկության և պատանեկության շրջանում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Խուդոյան Ս.Ս., «Անձի զարգացման ճգնաժամային տարիքները», Երևան, Զանգակ-97 2004 թ. 45-52 էջ

2. Հարությունյան Ս.Ֆ., « Մարդու հոգեսեռական հիմունքներ», Երևան 2004 թ, 157-170 էջ

3. Арзуманян С. Д. <<психолого – криминалогическая теория становления лицности правохарушителя>>, Ереван 2000

4. Ачитаева И.Б., Деструктивные взаимоотношения в учебных группах образовательных учреждений МВД России. Дисс…кандидат психологических на- ук. – Москва, 2010 – С. 22-26.

5. Батакова В.В., Мартышко Н. В. Родительские собраня:10класс-М.: ВАКО, 2011-160с. 6. Бердышев И. Лекарство против ненависти / И. Бердышев, Е. Куценко // Первое сентября – 2005. – № 18. – С. 3.

7. Кон И. С. “ Психология старшекласника” Москва, “ Просвещение”, 1982г. 65-131 стр.

8. Кон И. С. Что такое буллинг, как с ним бороться? / И. С. Кон // [Электронный ресурс]. Режим доступа: http://www.sexology.narod.ru/info18.html. – Дата доступа : 25.01.2011.

9. Лэйн Д. А. Школьная травля (буллинг) / Д. А. Лэйн / [Электронный ресур]. – Режим доступа : http://www.zipsites.ru/psy/psyib/ info.php?=414. – Дата дотупа : 25.01.2011. 10. Макаренко А. С. “Педагогическая поэма” 1935г., 45 стр.

11. Петровский А. В. “Возрастная педагогическая психология”, Москва, Прос., 1973 г., 106-107 стр